

**«ԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԻԶԵՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ**

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորի եզրակացություն
- 6 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
- 7 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 8 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
- 9 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
- 11 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Կազմակերպական-իրավական ձևը՝	լիզինգային վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	տրամադրել վարկեր, ներգրավել փոխառություններ
Տնօրեն՝	Արամ Մխիթարյան

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՐՈՒԹՅՈՒՆԳ ԼԻԳՆԻՆԳԱՅԻՆ Վարկային Կազմակերպություն» ՍՊԸ խորհրդին

Կարծիք

Մենք առողիտի ենք ենթարկել «ԱԳՐՈՒԹՅՈՒՆԳ» ԼՎԿ ՍՊԸ (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք առողիտն անցկացրեցրել ենք Առողիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Առողիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առողիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք)*, և պահպանել ենք ՀՄԷՄ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները:

Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան առողիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 18-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո COVID-19 համավարակի տարածման հնարավոր ազդեցությունը:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այնտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:


Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սամակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

24 հունիսի, 2020թ.



«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5	127,769	90,653
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	5	(27,911)	(13,006)
Զուտ տոկոսային եկամուտ		99,858	77,647
Այլ գործառնական եկամուտ	6	10,350	12,498
Արտաբժույթային գործարքներից ստացված զուտ վնաս		(1,843)	(100)
Գործառնական եկամուտ		108,365	90,045
Վարկերի գծով անհավաքելիության կորուստ		(23,989)	(17,266)
Անձնակազմի գծով ծախսեր		(23,063)	(17,709)
Վարչական և այլ ծախսեր	7	(10,864)	(11,388)
Շահույթ մինչև հարկվելը		50,449	43,682
Շահութահարկի գծով ծախս	8	(11,164)	(9,452)
Շահույթ հարկումից հետո		39,285	34,230
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		39,285	34,230

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ԱԳՐՈՒԻԶԻՆԳ ԼՎԿ ՍՊԸ ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 24-ին, ստորագրությամբ

Տնօրեն
Արամ Մխիթարյան

Գլխավոր հաշվապահ
Մարիամ Գազազյան



«ԱԳՐՈՒԻՋԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	31 դեկ. 2019թ. հազար դրամ	31 դեկ. 2018թ. հազար դրամ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և համարժեքներ		2,202	3,427
Հաճախորդներին տրված վարկեր	9	843,725	532,459
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ		679	746
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	12	20,811	-
Հետաձգված հարկային ակտիվ	10	5,724	3,718
Այլ ակտիվներ		1,686	1,341
Ընդամենը ակտիվներ		874,827	541,691
Պարտավորություններ			
Ներգրավված փոխառություններ, վարկեր	11	582,859	307,329
Վարձակալության գծով պարտավորություն	12	21,654	-
Շահութահարկի գծով պարտավորություն		5,318	2,188
Այլ պարտավորություններ		14,338	11,742
		624,169	321,259
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	13	200,000	177,559
Կապիտալ պահուստ		14,582	12,922
Կուտակված շահույթ		36,076	29,951
		250,658	220,432
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		874,827	541,691

«ԱԳՐՈՒԻՋԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	125,094	88,999
Վճարված տոկոսներ	(26,020)	(12,122)
Ջուտ մուտքեր/(ելքեր) արտարժույթով գործառնություններից	(3,864)	(381)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(21,443)	(16,503)
Այլ ստացված եկամուտ	10,350	12,498
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(8,413)	(10,779)
Ջուտ գործառնական ակտիվների (աճ)/ նվազում		
Հաճախորդներին տրված վարկերի (ավելացում)/նվազում	(328,926)	(179,798)
Այլ ակտիվների նվազում	(347)	1,523
Այլ պարտավորությունների ավելացում/(նվազում)	946	1,540
	(252,622)	(115,023)
Վճարված շահութահարկ	(10,040)	(17,181)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսք	(262,662)	(132,204)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(511)	(507)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսք	(511)	(507)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի համալրում	22,441	-
Վճարված շահաբաժիններ	(31,500)	(19,760)
Վարձակալության վճարում	(3,920)	-
Վարձակալության տոկոսի վճարում	2,890	-
Վարկերի, փոխառությունների ավելացում	1,099,085	529,408
Վարկերի, փոխառությունների նվազում	(827,036)	(374,469)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսք	261,960	135,179
Դրամական միջոցների զուտ հոսք	(1,213)	2,468
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(12)	1
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	3,427	958
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	2,202	3,427

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կապիտալ պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
01.01.2018թ. դրությամբ	177,559	11,881	16,522	205,962
Տարվա շահույթ	-	-	34,230	34,230
Տարվա համապարփակ եկամուտ	-	-	34,230	34,230
Գործարքներ մասնակիցների հետ				
Շահաբաժին	-	-	(19,760)	(19,760)
Հատկացումներ կապիտալ պահուստին	-	1,041	(1,041)	-
Ընդամենը գործարքներ մասնակիցների հետ	-	1,041	(20,801)	(19,760)
31.12.2018թ. դրությամբ	177,559	12,922	29,951	220,432
01.01.2019թ. դրությամբ	177,559	12,922	29,951	220,432
Տարվա շահույթ	-	-	39,285	39,285
Տարվա համապարփակ եկամուտ	-	-	39,285	39,285
Գործարքներ մասնակիցների հետ				
Կապիտալի համալրում	22,441	-	-	22,441
Շահաբաժին	-	-	(31,500)	(31,500)
Հատկացումներ կապիտալ պահուստին	-	1,660	(1,660)	-
Ընդամենը գործարքներ մասնակիցների հետ	22,441	1,660	(33,160)	(9,059)
31.12.2019թ. դրությամբ	200,000	14,582	36,076	250,658

«ԱԳՐՈՒԻՋԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1.	Ընկերության վերաբերյալ	11
2.	Պատրաստման հիմունքներ	11
3.	Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ	13
4.	Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում	15
5.	Զուտ տոկոսային եկամուտ	23
6.	Այլ գործառնական եկամուտ	23
7.	Վարչական և այլ ծախսեր	24
8.	Շահութահարկի գծով ծախս	24
9.	Վարկեր հաճախորդներին	24
10.	Հետաձգված հարկային ակտիվ	28
11.	Ներգրավված վարկեր և փոխառություններ	28
12.	Վարձակալության գծով պարտավորություն	29
13.	Կանոնադրական կապիտալ	29
14.	Պայմանական պարտավորություններ	30
15.	Գործարքներ կապակցված կողմերի հետ	30
16.	Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ	30
17.	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	32
	Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ	40

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընկերության վերաբերյալ

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» լիզինգային վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 04.08.99թ.-ին «ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ՍՊԸ Ֆիրմային անվանմամբ: 26.08.2003թ-ի թիվ 299Ա որոշմամբ «ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ՍՊԸ-ն գրանցվել և լիցենզավորվել է որպես «ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ-ի: Ընկերության գործունեության հիմնական նպատակն է վարկավորման և ֆինանսական վարձակալության միջոցով ՀՀ գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտում փոքր և միջին բիզնեսի խթանումը: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է միայն ՀՀ-ում:

Ընկերության միակ մասնակիցը Սաթենիկ Վարդանյանն է, որին պատկանում է 100% բաժնեմասը:

Ընկերության հիմնական ֆինանսավորման աղբյուրներն են միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունները, բանկերից ստացված վարկերը, ինչպես նաև բաժնետերերից ստացված փոխառությունները:

Ընկերության գրասենյակը գտնվում է ՀՀ, Երևան քաղաքի Ազատության 1/21, 39 տարածք հասցեում:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալներով կազմել է 8 մարդ (2018թ.՝ 7 մարդ):

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 17-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվություններին միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2019թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ 16 “Վարձակալություն”;
- ՖՀՄՍԿ 23 “Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն”:

Նշվածների ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

բ) Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած դատողությունների, գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է ստորև՝

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Այն բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակներում պահվում են ակտիվները և պայմանագրային դրույթների գնահատումը, որոշելու համար, թե արդյոք որոշակի անսպասելի ատաղացող դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 17:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Գնահատում, թե արդյո՞ք ֆինանսական ակտիվի պարտաքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, միևնույն պարտքային ռիսկի բնութագիր ունեցող ակտիվների խմբավորումը, սպասվելիք պարտքային վնասի գնահատումը այդ թվում ապագայի կանխատեսմանը վերաբերող տեղեկատվության օգտագործմամբ:

Վարձակալություն

Վարձակալության պայմանագրով (որի շրջանակներում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ) վարձակալության ժամկետի սահմանում, ներառյալ այն, թե արդյոք Ընկերությունը ողջամտորեն մտադիր է կիրառել վարձակալի ընտրելու հնարավորությունը, և վարձակալության գծով պարտավորությունները չափելու համար օգտագործվող լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի որոշում (Ծան. 12):

Անընդհատության սկզբունք

Ղեկավարությունը պատրաստել է այս ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Այս դատողությունն անելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների եկամտաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

Ընկերությունը կայուն հասույթ է ստանում իր բիզնես գործունեությունից: Ղեկավարությունը չի ակնկալում, որ իրավիճակը կարող է առաջացնել իր գործունեության անընդհատության անհամապատասխանություն՝ հաշվի առնելով դրական գործառնական դրամական հոսքերի շարունակականության ակնկալիքը:

Ընկերության գործունեության անընդհատության վրա ազդող նշանակալի գործոն է հանդիսանում համաշխարհային առողջապահության արտակարգ իրավիճակը Չինաստանի Վուհան քաղաքում ծագած կորոնավիրուսային նոր շտամի պատճառով («COVID-19-ի բռնկում») և ռիսկերը միջազգային հանրության համար, քանի որ վիրուսը տարածվում է ողջ աշխարհում իր ծագման վայրից դուրս: 2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաճարակ (պանդեմիա)՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա: (Տե՛ս Ծան. 18):

Ղեկավարության գնահատմամբ COVID19-ի տարածման և կառավարության համապատասխան քաղաքականությունների բացասական հետևանքները էականորեն չեն ազդի առաջիկայում Ընկերության գործունեության վրա:

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Գնահատումներ կատարելուց հետո Ընկերության ղեկավարությունը ողջամիտ ակնկալիք ունի, որ Ընկերությունը տեսանելի ապագայում կարող է ապահովել իր գործունեության անընդհատությունը: Հետևաբար իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը շարունակում է հիմնվել անընդհատության սկզբունքի վրա, այդ իսկ պատճառով սույն ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում որևէ ճշգրտումներ, որոնց անհրաժեշտությունն ի հայտ կգար այն դեպքում, եթե Ընկերությունը ի վիճակի չլիներ ապահովել իր գործունեության շարունակականությունը:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված);*
- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտարկելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից;*
- *Մակարդակ 3. Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա):*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

- Վարկային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ,
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Հաճախորդներին տրված վարկեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Վարկեր և փոխառություններ

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ֆինանսական ակտիվներ

	Ամորտիզացված արժեքով	
	չափվող ֆինանսական ակտիվներ	
	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	843,725	532,459
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,202	3,427
	845,927	535,886

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով	
	չափվող ֆինանսական	
	պարտավորություններ	
	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ներգրավված փոխառություններ, վարկեր	582,859	307,329
Վարձակալության գծով պարտավորություն	21,654	-
	604,513	307,329

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկերում տեղաբաշխված միջոցները, հաճախորդներին տրված վարկերը, ինչպես նաև ներգրավված վարկերը և փոխառությունները:

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի դիտարկելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Ընկերության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսական կազմակերպությունների (ՄՖԿ) ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Միկրոֆինանսակավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է վարկային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային կոմիտեների և վարկային կազմակերպության խորհրդի կողմից:

Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը վարկային մասնագետի կողմից հաճախորդի նախնական հայտի, նրա բիզնեսի և վարկային ռիսկերի պատշաճ ուսումնասիրության հիման վրա կատարված նախնական վերլուծական տեղեկություններ են, որոնց ճշգրտությունը համեմատական եղանակով ստուգում է նաև վարկային կառավարիչը, վարկային մասնագետի և վարկային կառավարիչի պատասխանատվությամբ: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):

Տնօրենը կոչված է բացահայտելու գործառնական, վարկային, պրոդուկտային ռիսկերի բացահայտման համար: Ներքին աուդիտը իրականացնում է ներկայացուցչությունների և Ընկերության վարկային գործընթացների կանոնավոր աուդիտներ:

Ընկերության վարկերի տրամադրման և սպասարկման ընթացակարգի համաձայն վարկային մասնագետները, գործառնական բաժինը, անվտանգությունը համապատասխանաբար ուսումնասիրում է ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ է լինում ուշացված մնացորդներին: Տնօրենի վերահսկողությամբ իրականացվում է ժամկետանց վարկերի հետ աշխատանքների կազմակերպումը:

Ընկերության բոլոր վարկերը ապահովված են վարկառուների և/կամ այլ անձանց անձնական երաշխավորություններով: Բացի այդ ըստ նպատակահարմարության, և վարկերի չափերից ելնելով, որպես դրանց ապահովման միջոց Ընկերությունն ընդունում է գրավ: Այնուամենայնիվ, վարկերի զգալի մասն անհատներին տրված փոքր գումարներով վարկեր են, որտեղ այսպիսի ապահովության

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

միջոցներ չեն կարող ձեռք բերվել: Այսպիսի ռիսկերը մոնիտորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ձկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության պարտքային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է անհատական ռիսկերից, և ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	843,725	532,459
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,202	3,427
	845,927	535,886

Հաշվեկշռային արժեքը լավագույն ձևով ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը, հաշվի առնելով նաև ձեռք բերված ցանկացած գրավ կամ անձնական երաշխիքներ: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր զուտ ազդեցությունը վարկային ազդեցության նվազեցման վրա էական չէ: Հաճախորդներին տրվող վարկերի վերլուծության և վարկային ռիսկի համակենտրոնացման մասին տեղեկատվությունը ներկայացված է 9-րդ ծանոթագրությունում:

Արժեզրկման պահուստ

Ընկերությունը սահմանում է պահուստ արժեզրկումից կորուստների գծով, որն իրենից ներկայացնում է վարկային պորտֆելում կրած վնասների գնահատումը: Այս պահուստի հիմնական բաղկացուցիչն իրենից ներկայացնում է վարկերի գծով կորուստների խմբային պահուստ, որը սահմանված է Ընկերության համասեռ ակտիվների գծով կապված այն վնասների հետ, որոնք հաշվեզրվել են, սակայն չեն վերագրվել վարկերին:

Աշխարհագրական կենտրոնացում

Ընկերության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության տարածքով:
 Հաճախորդներին տրված վարկերի ժամկետայնության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ծանոթագրություն 9-ում:

Դրամական միջոցներ բանկում

Ընկերությունը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Ընկերության կողմից միջոցների տեղաբաշխման համար ընտրված ֆինանսական հաստատությունները վստահելի են և հեղինակավոր:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է՝ տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծության մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

	Մինչև 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
<i>Ակտիվներ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները	2,202	-	-	-	-	2,202
Հաճախորդներին տրված վարկեր	59,248	66,979	153,993	516,892	46,613	843,725
	61,450	66,979	153,993	516,892	46,613	845,927
<i>Պարտավորություններ</i>						
Ներգրավված վարկեր և փոխառություններ	130,889	25,000	62,740	49,504	314,726	582,859
Վարձակալության գծով պարտավորություն	3,579	912	1,738	11,775	3,650	21,654
	134,468	25,912	64,478	61,279	318,376	604,513
	(73,018)	41,067	89,515	455,613	(271,763)	241,414
	Մինչև 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
<i>Ակտիվներ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները	3,427	-	-	-	-	3,427
Հաճախորդներին տրված վարկեր	54,785	45,571	110,381	307,985	13,737	532,459
	58,212	45,571	110,381	307,985	13,737	535,886
<i>Պարտավորություններ</i>						
Ներգրավված վարկեր և փոխառություններ	113,843	58,713	35,587	28,786	70,400	307,329
	113,843	58,713	35,587	28,786	70,400	307,329
	(55,631)	(13,142)	74,794	297,199	(56,663)	228,557

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2019թ.		2018թ.	
	միջին արդյունավետ տոկոսադրույք		միջին արդյունավետ տոկոսադրույք	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր	20.8	17.18	19.9	19.5
Տոկոսակիր պարտավորություններ				
Ներգրավված վարկեր և փոխառություններ	6.8	9.5	6.6	9.7
Վարձակալության գծով պարտավորություն	12.9	-	-	-

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների գործարքներն արտահայտված են վերջիններիս գործառնական արժույթից տարբեր արժույթով:

Ընկերության արտարժույթային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի հետ կապված փոխարժեքային փոփոխություններից, ինչի արդյունքում Ընկերությունը կարող է կրել նշանակալի վնասներ: Այս ռիսկն, ըստ էության, Ընկերության կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գուտ ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին ներկայացված է ստորև՝

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
ԱՄՆ դոլար		
ԱԿՏԻՎՆԵՐ		
Հաճախորդներին տրված վարկեր	600,209	453,064
Ընդամենը ակտիվներ	600,209	453,064
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներգրավված փոխառություններ, վարկեր	(322,082)	(210,376)
Ընդամենը պարտավորություններ	(322,082)	(210,376)
Զուտ դիրքը	278,127	242,688

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների՝ ՀՀ դրամով չափման համար Ընկերությունը կիրառել է նույն ամսաթվին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքը՝ 479.7 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց (31.12.2018թ. դրությամբ՝ 483.75 դրամ մեկ ԱՄՆ դոլար դիմաց): Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնեք տարվա շահույթի (հարկումից

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

հետո) և գուտ ակտիվների ավելագումանը՝ 27,813 հազար դրամի չափով (2017թ.՝ 24,269 հազար դրամի չափով), իսկ 10% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից հետո) և գուտ ակտիվների նվազմանը՝ նույն չափով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված ռիսկերի հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի առնվազն 45 օրվա ընթացքում կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Ընկերությունը նաև փորձում է նվազեցնել իրացվելիության ռիսկը՝ ներգրավելով հաստատուն տոկոսադրույքով փոխառություններ. վերջիններիս մասին ներկայացվել է «Տոկոսադրույքային ռիսկ» բաժնում:

Ընկերության իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության գանձապետական գործառնայթի միջոցով: Ցանկացած գործառնության համար Ընկերության կողմից նախատեսվում են համապատասխան միջոցներ, որոնց գումարը կախված է բյուջեից: Բյուջեն հաստատվում է Խորհրդի կողմից՝ այսպիսով հնարավոր դարձնելով դրամական միջոցների գծով Ընկերության կարիքների կանխատեսումը: Երբ գումարը գերազանցում է որոշակի սահմանաչափը, անհրաժեշտ է ստանալ նաև Խորհրդի հաստատումը:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Վարկեր և փոխառություններ	129,492	5,471	105,184	101,792	484,761	826,700	582,859
Վարձակալության գծով պարտավորություն	2,955	624	2,650	11,775	3,650	21,654	21,654
	132,447	6,095	107,834	113,567	488,411	848,354	604,513
	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Վարկեր և փոխառություններ	110,785	5,319	101,356	131,375	348,835		307,329
	110,785	5,319	101,356	131,375	348,835		307,329

«ԱԳՐՈՒԽՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն՝ ըստ հաշվեկշռային հոդվածների ներկայացվում է ստորև՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավելի հազ. դրամ	Ժամկետանց հազ. դրամ	Անժամկետ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,202	-	-	-	-	-	-	2,202
Հաճախորդներին տրված վարկեր	20,199	39,049	220,972	499,459	46,613	17,433	-	843,725
Հիմնական միջոցներ	-	-	-	-	-	-	21,490	21,490
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	-	-	5,724	5,724
Այլ ակտիվներ	-	1,686	-	-	-	-	-	1,686
Ընդամենը ակտիվներ	22,401	40,735	220,972	499,459	46,613	17,433	27,214	874,827
Պարտավորություններ								
Ներգրավված վարկեր և փոխառություններ	128,712	2,177	87,740	49,504	314,726	-	-	582,859
Վարձակալության գծով պարտավորություն	2,955	624	2,650	11,775	3,650	-	-	21,654
Շահութահարկի գծով պարտավորություն	-	-	5,318	-	-	-	-	5,318
Այլ պարտավորություններ	-	-	-	7,494	-	-	6,844	14,338
Ընդամենը պարտավորություններ	131,667	2,801	95,708	68,773	318,376	-	6,844	624,169
Զուտ դիրք	(109,266)	37,934	125,264	430,686	(271,763)	17,433	20,370	250,658

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ըստ հաշվեկշռային հոդվածների ներկայացվում է ստորև:

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավելի հազ. դրամ	Ժամկետանց հազ. դրամ	Անժամկետ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,427	-	-	-	-	-	-	3,427
Հաճախորդներին տրված վարկեր	22,619	27,609	155,952	307,985	13,737	4,557	-	532,459
Հիմնական միջոցներ	-	-	-	-	-	-	746	746
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	-	-	3,718	3,718
Այլ ակտիվներ	-	1,341	-	-	-	-	-	1,341
Ընդամենը ակտիվներ	26,046	28,950	155,952	307,985	13,737	4,557	4,464	541,691
Պարտավորություններ								
Ներգրավված վարկեր և փոխառություններ	110,248	3,595	94,300	28,786	70,400	-	-	307,329
Շահութահարկի գծով պարտավորություն	-	-	2,188	-	-	-	-	2,188
Այլ պարտավորություններ	-	-	-	5,874	-	-	5,868	11,742
Ընդամենը պարտավորություններ	110,248	3,595	96,488	34,660	70,400	-	8,056	321,259
Զուտ դիրք	(84,202)	25,355	59,464	273,325	(56,663)	4,557	(1,404)	220,432

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը մինևույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: ՀՀ կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, լիզինգային վարկային կազմակերպությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 150,000 հազար ՀՀ դրամ նվազագույն ընդհանուր կապիտալ (2018թ. դեկտեմբերի 31-ին՝ 100,000 հազար ՀՀ դրամ): Հետևյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության կապիտալ ռեսուրսները կապիտալի համարժեքության նպատակներով:

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ներգրավված վարկեր և փոխառություններ	582,859	307,329
Վարձակալության գծով պարտավորություն	21,654	-
<i>Հանած</i> դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(2,202)	(3,427)
Զուտ պարտք	602,311	303,902
Սեփական կապիտալ	250,658	220,432
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն (%)	2.40	1.38

5. Զուտ տոկոսային եկամուտ

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
<i>Տոկոսային եկամուտ</i>		
Հաճախորդներին տրված վարկեր	127,769	90,653
	127,769	90,653
<i>Տոկոսային ծախս</i>		
Ներգրավված վարկեր և փոխառություններ	(25,021)	(13,006)
Վարձակալություն	(2,890)	-
	(27,911)	(13,006)
Զուտ տոկոսային եկամուտ	99,858	77,647

6. Այլ գործառնական եկամուտ

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ստացված տույժերից, տուգանքներից	8,545	10,838
Այլ	1,805	1,660
	10,350	12,498

«ԱԳՐՈՒԽՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

7. Վարչական և այլ ծախսեր

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Գրասենյակային ծախսեր	2,471	1,111
Մաշվածություն, ամորտիզացիա	2,451	576
Զփոխհատուցվող հարկեր, տուրքեր	1,788	1,608
Աուդիտ, խորհրդատվություն	1,000	1,000
Հեռահաղորդակցություն	771	739
Փոխադրամիջոցների սպասարկում	573	628
Վարձակալություն	-	3,720
Այլ	1,810	2,006
	10,864	11,388

8. Շահութահարկի գծով ծախս

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
<i>Հարկային ծախս</i>		
Ընթացիկ հարկի գծով		
Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկ	13,170	10,274
Ընդամենը ընթացիկ հարկ	13,170	10,274
Հետաձգված հարկի գծով		
Ժամանակավոր տարբերություններ (Ծնթ. 10)	(2,006)	(822)
Ընդամենը հետաձգված հարկային ծախս/ (եկամուտ)	(2,006)	(822)
	11,164	9,452

Ընթացիկ տարվա հարկի դրույքաչափը կազմել է 20%՝ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (2018 թ.՝ 20%):
 Հարկի դրույքաչափը սահմանվել է 18% 2020 թվականի հունվարի 1-ից: Ընթացիկ տարվա շահութահարկը
 հաշվարկվել է 20% դրույքով, իսկ հետաձգված հարկը հաշվետու ամսաթվով՝ 18%:
 Հարկային արդյունավետ դրույքաչափի համահարթեցումը հետևյալն է՝

	2019թ.		2018թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	50,449		43,682	
Շահութահարկ՝ հաշվարկված շահութահարկի դրույքաչափով 20% (2018թ.՝ 20%)	10,090	20.0%	8,736	20.0%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր	404	0.8%	716	1.6%
Հարկի դրույքի փոփոխության ազդեցություն	670	1.3%	-	-
Ընդամենը հարկային ծախս և արդյունավետ տոկոսադրույք	11,164	22.1%	9,452	21.6%

9. Վարկեր հաճախորդներին

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	899,570	557,155
Վարկերի արժեզրկման պահուստ	(55,845)	(24,696)
	843,725	532,459

«ԱԳՐՈՒԽՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է վարկերի արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Սկզբնական մնացորդ	24,696	16,745
ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցություն	-	9,308
Վերահաշվարկված սկզբնական մնացորդ	24,696	26,053
Զուտ (հակադարձում) / ծախս	23,989	17,266
Վերականգնումներ արժեզրկման պահուստից	61,246	-
Զուտ դուրսգրություններ	(54,086)	(18,623)
Վերջնական մնացորդն առ 2019թ.-ի դեկտեմբեր 31-ի դրությամբ	55,845	24,696

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է տրամադրված վարկերի վերլուծություն ըստ դասերի 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Գյուղատնտեսություն	402,352	229,516
Առևտուր	143,235	104,619
Այլ սպառողական վարկեր	118,201	30,758
Փոխադրումներ, պահեստային տնտեսություն	92,795	103,623
Կեցության և հանրային սննդի կազմակերպում	52,682	40,749
Իրավաբանական և հաշվապահական գործունեություն	5,844	2,041
Շինարարություն և վերանորոգում	5,069	7,368
Տնտեսության այլ ճյուղեր	23,547	13,785
	843,725	532,459

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է տրամադրված վարկերի վերլուծություն ըստ մարզերի 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Երևան	293,941	215,234
Արմավիր	151,035	70,109
Արարատ	101,323	67,258
Արագածոտն	87,124	50,096
Կոտայք	63,870	35,750
Վայոց Ձոր	50,124	33,345
Գեղարքունիք	37,814	16,137
Սյունիք	37,112	31,985
Լոռի	10,148	9,762
Շիրակ	7,762	2,783
Տավուշ	3,472	-
	843,725	532,459

«ԱԳՐՈՒԽՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է տրամադրված վարկերի վերլուծություն ըստ Ընկերության կողմից ձեռքբերված գրավի տեսակների 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Անշարժ գույք	346,998	151,172
Երաշխավորություն	281,036	20,092
Փոխադրամիջոցներ	6,729	143,155
Այլ հիմնական միջոցներ	550	18,714
Չապահովված վարկեր	208,413	199,326
	843,726	532,459

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

	2019			2018		
	Համախառն	Պահուստ	Զուտ	Համախառն	Պահուստ	Զուտ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Վարկեր						
անորոշագրված արժեքով						
Ժամկետային վարկեր	846,002	49,694	796,308	527,041	15,142	511,899
Ժամկետանց և արժեզրկված վարկեր				6,477	381	6,096
<i>1-ից 30 օր ժամկետանց</i>	30,183	2,547	27,636	-	-	-
<i>31-ից 60օր ժամկետանց</i>	6,729	1,260	5,469	3,780	1,117	2,663
<i>60-ից 90 օր ժամկետանց</i>	-	-	-	-	-	-
<i>91 և ավել օր ժամկետանց</i>	16,656	2,344	14,312	19,857	8,056	11,801
Ընդամենը վարկեր	899,570	55,845	843,725	557,155	24,696	532,459

«ԱԳՐՈՒԻՋԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակը ամփոփում է վարկի մնացորդների և ակնկալվող վարկի կորստի (ECL) մնացորդի տեղաշարժը յուրաքանչյուր փուլերի համար 2019 և 2018 թվականների ընթացքում.

	Փուլ 1			Փուլ 2			Փուլ 3			Ընդամենը վարկեր հազ.դրամ
	Համախառն հազ.դրամ	Պահուստ հազ.դրամ	Զուտ հազ.դրամ	Համախառն հազ.դրամ	Պահուստ հազ.դրամ	Զուտ հազ.դրամ	Համախառն հազ.դրամ	Պահուստ հազ.դրամ	Զուտ հազ.դրամ	
2019թ.										
<i>Վարկեր հաճախորդներին անորոշիզացված արժեքով</i>										
Սկզբնական մնացորդ	527,041	15,142	511,899	10,257	1,498	8,759	19,857	8,056	11,801	532,459
<i>Տեղափոխում 1-ին փուլ</i>	2,790	167	2,623	(2,790)	(167)	(2,623)	-	-	-	-
<i>Տեղափոխում 2-ին փուլ</i>	(21,448)	(1,135)	(20,314)	25,332	1,372	23,960	(3,884)	(238)	(3,646)	-
<i>Տեղափոխում 3-ին փուլ</i>	(10,538)	(2,343)	(8,195)	(15,071)	(1,135)	(13,937)	25,609	3,478	22,131	-
Կորստի պահուստի գուտ վերաչափում	(246,747)	3,780	(250,527)	(64,013)	(4,966)	(59,047)	40,225	(8,952)	49,177	(260,397)
Ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	625,087	36,629	588,458	53,014	4,658	48,356	-	-	-	636,814
Դուրսգրումներ	-	-	-	-	-	-	(65,152)	-	(65,152)	(65,152)
Վերջնական մնացորդ	876,185	52,241	823,944	6,729	1,260	5,468	16,656	2,344	14,312	843,725
2018թ.										
<i>Վարկեր հաճախորդներին անորոշիզացված արժեքով</i>										
Սկզբնական մնացորդ	391,391	16,745	374,646	-	-	-	-	-	-	374,646
<i>Տեղափոխում 1-ին փուլ</i>	-	-	-	-	-	-	-	-	-	-
<i>Տեղափոխում 2-ին փուլ</i>	(8,146)	(1,338)	(6,808)	8,146	1,338	6,808	-	-	-	-
<i>Տեղափոխում 3-ին փուլ</i>	(17,199)	(6,977)	(10,223)	-	-	-	17,199	6,977	10,223	-
Կորստի պահուստի գուտ վերաչափում	(246,354)	(5,091)	(241,263)	-	-	-	67,979	-	67,979	(173,284)
Ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	407,349	11,802	395,547	2,111	160	1,951	2,657	1,079	1,578	399,076
Դուրսգրումներ	-	-	-	-	-	-	(67,979)	-	(67,979)	(67,979)
Վերջնական մնացորդ	527,041	15,141	511,900	10,257	1,498	8,759	19,857	8,056	11,801	532,459

2019թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի անհատապես նշանակալի հաճախորդներ:

«ԱԳՐՈՒԽՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

10. Հետաձգված հարկային ակտիվ

Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Պարտքային վնասների նոր մոդելի կիրառման արդյունքում Ընկերությունը ճշգրտել է արժեզրկման պահուստի մնացորդը ուղղակիորեն սեփական կապիտալում առանց 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վերահաշվարկման:

Հետաձգված հարկային ակտիվների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և ՖՀՄՍ 9-ի ճշգրտման ազդեցության մանրամասները ներկայացված են ստորև.

	2018թ.-ի դեկտեմբերի 31	Նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2019թ.-ի դեկտեմբերի 31
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Հիմնական միջոցներ	-	(3,746)	(3,746)
Տրամադրված վարկեր	2,543	1,680	4,223
Այլ պարտավորություններ	1,175	174	1,349
Վարձակալության գծով պարտավորություն	-	3,898	3,898
	3,718	2,006	5,724

	2017թ.-ի դեկտեմբերի 31	Նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցություն	2018թ.-ի դեկտեմբերի 31
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Տրամադրված վարկեր	-	681	1,862	2,543
Այլ պարտավորություններ	1,034	141	-	1,175
	1,034	822	1,862	3,718

11. Ներգրավված վարկեր և փոխառություններ

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	31.12.19թ.	31.12.18թ.
				հազ. դրամ	հազ. դրամ
Չապահովված փոխառություն կապակցված կողմից	ԱՄՆ դոլար	Անժամկետ	անտոկոս	118,581	106,956
Չապահովված փոխառություն կապակցված կողմից	ՀՀ դրամ	Անժամկետ	անտոկոս	6,000	320
Ապահովված փոխառություն ՀՀ ՖՆ ԱՖԾԿԿ-ԾԻԳ ՊՀ –ից	ՀՀ դրամ	2030թ.	4%	193,431	70,926
Ապահովված փոխառություն ՀՀ «ԳՏՏԶ-ԾԻԳ» ՊՀ	ԱՄՆ դոլար	2049թ.	4.7%	123,692	-
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	2020թ.	10%	79,833	79,118
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	2019թ.	12%	25,173	24,302
Ապահովված վարկեր առևտրային բանկից	ՀՀ դրամ	2020թ.	13%	10,041	-
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	2020թ.	13%	26,108	25,707
				582,859	307,329

«ԱԳՐՈՒԼԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Փոխառությունների անվանական արժեքները մոտարկում են իրական արժեքներին:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Ֆինանսների նախարարության Արտասահմանյան Ֆինանսական Ծրագրերի Կառավարման Կենտրոն ծրագրի իրականացման գրասենյակ պետական հիմնարկից (ՀՀ ՖՆ ԱՖԾԿԿ-ԾԻԳ ՊՀ) ստացված վարկերն ապահովված են 178,851 հազար (2018թ. 69,376 հազար) դրամ գումարով հաճախորդներին տրված վարկերով, իսկ բոլոր առևտրային բանկերից ստացված վարկերը ապահովված են անշարժ և շարժական գույքով:

12. Վարձակալության գծով պարտավորություն

Վարձակալության գծով պարտավորությունը ներկայացված է ըստ պայմանագրերի՝

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	31.12.19թ. հազ. դրամ
Ագրոլիզինգ ԼՎԿ ՍՊԸ – անշարժ ու շարժական գույքի վարձակալություն	ՀՀ դրամ	2020թ.	12.9%	21,654
				21,654

Բոլոր վարձակալությունները հաշվառվել են օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալական պարտավորության ճանաչման միջոցով, բացառությամբ՝

- վարձակալությունների, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, և
- կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս և պակաս ժամկետով)

Ընկերությունը վարձակալում է երկու գրասենյակային տարածք:

Ընկերությունը ՖՀՄՍ 16-ին անցումը կատարել է 2019թ. հունվարի 1-ին առանց համեմատելի տվյալների վերաներկայացման: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կիրառված անցումային պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 16-ում:

ՖՀՄՍ 16 Վարձակալություն ստանդարտի համաձայն Ընկերությունը ճանաչելու է վաճակալված գրասենյակային տարածքները և մեքենա՝ որպես օգտագործման իրավունքով ակտիվ, և վարձակալության գծով պարտավորությունը: Մինչ այդ ամսաթիվը, այդ վարձակալությունը դիտարկվել է որպես գործառնական վարձակալություն, որով Ընկերությունը չի ճանաչել համապատասխան ակտիվը և պարտավորությունը, փոխարենը՝ վարձակալական վճարը ուղիղ-գծային մեթոդով ծախսագրել է վարձակալական ժամանակաշրջանի ընթացքում:

Ֆինանսավորման վարձակալության շարժն ու մնացորդները 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ներկայացված են ստորև՝

	2019թ. հազ. դրամ
Սկզբնական մնացորդ	-
ՖՀՄՍ 16-ի կիրառում	22,684
Տոկոսային ծախսը	2,890
Տարվա ընթացքում Ֆինանսական պարտավորությունների մարումներ	(1,030)
Վճարված տոկոսներ	(2,890)
Վերջնական մնացորդ	21,654

13. Կանոնադրական կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 200,000 հազար (2018թ.՝ 177,559 հազար) դրամ արժողությամբ մեկ բաժնեմասից: 2019թ. -ի ընթացքում կանոնադրական կապիտալը համարվել է 2019թ. -ի մայիսի 31-ին կայացած Խորհրդի որոշմամբ:

«ԱԳՐՈՒԽՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Բաժնեմասի սեփականատերն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները:

14. Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել կապիտալ ներդրումների գծով պարտավորություններ (ինչպես նաև՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

Ընկերությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որևէ կողմի պարտավորությունների համար երաշխավորություն չի տրամադրել (նույնը 31.12.2018թ. դրությամբ):

Ընկերության հանդեպ հարուցված դատական հայցերը 31.12.2019թ. դրությամբ էական գումարային պահանջ չեն պարունակել (նույնը 31.12.2018թ. դրությամբ):

15. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրությունները ներկայացված են ստորև:

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսումները ներկայացվում են ստորև:

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Աշխատավարձ, այլ հատուցումներ	<u>9,860</u>	<u>8,760</u>

Կապակցված կողմերի հետ հաշվետու տարվա ընթացքում մնացած այլգործարքները ներկայացված են ծանոթագրություն 11-ում:

16. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ

ՖՀՄՍ 16 Լիզինգի ստանդարտը ընդունվել է 2019 թվականի հունվարի 1-ին և փոխարինել է ՀՀՄՍ 17 վարձակալության ստանդարտին: Ընկերությունն ընդունեց «ՖՀՄՍ 16» -ը՝ օգտագործելով հետահայաց մոտեցումը՝ օգտագործելու իրավունք ունեցող ակտիվի ճանաչումը և վարձակալության պարտավորությունը նախնական կիրառման ամսաթվին (2019 թվականի հունվարի 1):

Բոլոր վարձակալությունները հաշվառվել են օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալական պարտավորության ճանաչման միջոցով, բացառությամբ՝

- վարձակալությունների, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, և
- կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս և պակաս ժամկետով)

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է նույն նյութական պահանջները, ինչպես դա նախատեսված էր ՀՀՄՍ 17-ի ներքո: Ընկերությունը չի գործում որպես վարձատու: Առկա չեն կարճաժամկետ կամ ցածր արժեքով վարձակալություններ:

«ԱԳՐՈՒԽՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Անցման մեթոդ և գործնական մոտեցումներ

Ընկերությունն ընդունել է ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ին առանց վերաներկայացնելու համեմատական տվյալները:

ՖՀՄՍ 16 ներկայացնում է որոշակի գործնական մոտեցումներ, ներառյալ նրանք, որոնք վերաբերում են ստանդարտի սկզբնական ընդունմանը: Ընկերությունը ՖՀՄՍ 16 ընդունման ժամանակ կիրառել է հետևյալ գործնական մոտեցումները այն վարձակալությունների նկատմամբ, որոնք դասակարգվել են որպես գործառնական վարձակալություն:

(ա) Միասնական գեղջման դրույքի կիրառում համեմատելի պայմաններով վարձակալությունների պորտֆելին,

(բ) Բացառության կիրառում՝ չճանաչելու օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և պարտավորություն այն վարձակալությունների գծով, որոնց ժամկետը ստանդարտի առաջին կիրառման ամսաթվին 12 ամից պակաս է:

Որպես վարձակալ Ընկերությունը դասակարգել է իր վարձակալությունները որպես գործառնական և ֆինանսական իր գնահատականի հիման վրա, արդյոք էականորեն բոլոր ռիսկերը և օգուտները անցել են իրեն, թե ոչ:

ՖՀՄՍ 16-ի համաձայն Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և պարտավորություններ իր վարձակալությունների մեծամասնության գծով: Ընկերությունը չունի այնպիսի վարձակալություններ, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, կամ որոնք կարճաժամկետ են (12 ամիս և պակաս ժամկետով):

ՖՀՄՍ 16-ի ընդունման արդյունքում Ընկերությունը ճանաչել է հետևյալ օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալական պարտավորություն:

Դասակարգում ՀՀՄՍ 17	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	Վարձակալական պարտավորություն
Գործառնական վարձակալություն	Գրասենյակի տարածք՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվել է վարձակալական պարտավորության գումարի չափով: է	Չափվել է վարձավճարների ներկա արժեքով՝ գեղջված Ընկերության կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Ընկերության կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքը հավասարվում է դրույքին, որով Ընկերությունը հնարավորություն ունի ներգրավել փոխառու միջոցներ անկախ փոխատուից: Հաշվարկներում կիրառվել է 12.9% միջին կշռված դրույքը:

«ԱԳՐՈՒԽՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցությունը 2019թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա բերվում է ստոր`

	31 դեկտեմբերի 2018թ. (ՀՀՄՍ 17) հազ. դրամ	Վերադասակարգման ճշգրտում հազ. դրամ	1 հունվարի 2019թ. (ՖՀՄՍ 16) հազ. դրամ
<i>Ակտիվներ</i>			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	20,379	20,379
<i>Պարտավորություններ</i>			
Վարձակալական պարտավորություն	-	20,379	20,379

17. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտները ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի համախառն գումարի նկատմամբ բացառությամբ ձեռքբերման դրությամբ արժեզրկված կամ ակտիվի գործողության ընթացքում վարկային ռիսկի էական վատթարացման հետևանքով արժեզրկված ակտիվների, որոնց դեպքում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կիրառվում է ակտիվի ամորտիզացված արժեքի հիման վրա:

Տոկոսային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի և ծախսի բաշխման մեթոդն է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը:

Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Արտարժույթային գործարքներ

Ընկերության գործառնական արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից գոյացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը, նպատակները և այդ քաղաքականության կիրառումը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, ֆինանսական ակտիվների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը ,
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների ակնկալիքները:

Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և վարկավորման հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև որպես շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

«ԱԳՐՈՒԻՉԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝
ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿԿ),
բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:
Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև):

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

գ) «ամորտիզացված արժեքով չափվող»,

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿԿ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերության հիմնական ֆինանսական ակտիվները դասակարգված են որպես «Ամորտիզացված արժեքով չափվող»: Ստորև ներկայացնում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականությունն այդ դասի համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները հիմնականում ներառում են այն ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով (օրինակ՝ հաճախորդներին տրված վարկեր), իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցրած արժեքով մասնաճիճի պահուստին համամասնորեն:

Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են բանկերում տեղաբաշխված միջոցները, դրամական միջոցները և դրանց համարժեքները և հաճախորդներին տրված վարկերը: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում:

Արժեզրկում

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻՍՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պատքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորուստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորուստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով պարտականությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է ըստ պարտականությունների չկատարման հավանականության աստիճանի կշռված պարտքային վնասի գնահատականը և չափվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական ակտիվներ, որոնք արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ տարբերությունն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Ընկերությունը պետք է ստանա պայմանագրի համաձայն և որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ),
- ֆինանսական ակտիվներ, որոնք արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերություն,

Արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- վարկառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, մասնավորապես պարտականությունների չկատարումը կամ վճարման ուշացումը,
- վարկի պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- վարկառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը:

Վարկը, որի պայմանները վերանայվել են վարկառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է արժեզրկված, եթե գոյություն չունի վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը չստանալու ռիսկն էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Մպավող պարտքային վնասի գծով պահուստի ներկայացումը ֆինանսական հաշվետվությունում

Մպավող պարտքային վնասի գծով պահուստը ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների համար նվազեցվում է ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ հիմունքով:

Վարկերի դուրս գրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի դրանք հետ ստանալու իրատեսական հեռանկար: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, որ վարկառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ դուրսգրման ենթակա գումարները մարելու համար բավարար դրամական միջոցների հոսքեր:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանից հետո, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը: Ընկերությունը պետք է վերադասակարգի ֆինանսական ակտիվները, եթե փոխում է այդ ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը: Ակնկալվում է, որ նման փոփոխությունները չափազանց հազվադեպ կլինեն: Այս փոփոխությունները որոշվում են Ընկերության վերադաս դեկավարության կողմից՝ արտաքին կամ ներքին փոփոխությունների արդյունքում և պետք է նշանակալի լինեն Ընկերության գործունեության համար և տեսանելի՝ արտաքին կողմերի համար:

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:

Բանկերից և այլ փոխատուներից ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Շեղանկալի նման տոկոսակիր պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, համաձայն որի՝ պարտավորության մարման

Ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում տոկոսային ծախսերի հաշվարկը կատարվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն դրույթի կիրառմամբ: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության պայմաններից էլնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են գործարքի հետ կապված սկզբնական ծախսերը, մարման ժամանակ վճարվելիք այլ հավելյալ վճարներ, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները:

Վարձակալված ակտիվ

Ըստ ՀՀՄՍ 17-ի – քաղաքանությունը մինչև 01.01.2019թ.

Եթե վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները փոխանցվել են Ընկերությանը («Ֆինանսական վարձակալություն»), ակտիվը հաշվառվում է այնպես, կարծես այն ձեռք է բերվել: Ակտիվ ճանաչված գումարը սկզբնապես չափվում է վարձակալված գույքի իրական արժեքի և վարձակալության ժամկետի համար վճարվող նվազագույն վարձավճարների ներկա արժեքի նվազագույն գումարի չափով: Համապատասխան վարձակալության պարտավորությունը ներկայացվում է որպես պարտավորություն: Վարձակալության վճարները բաշխվում է մայր գումարի և տոկոսավճարի միջև: Տոկոսագումարի տարրը վերագրվում է վարձակալության ժամանակահատվածի շահույթ կամ վնասում և հաշվարկվում է այնպես, որ այն ներկայացնում է վարձակալության պարտավորության հաստատուն մասնաբաժինը: Մայր գումարի տարրը նվազեցնում է վարձատուին պարտք մնացորդը:

Ըստ ՀՀՄՍ 16-ի – քաղաքանությունը 01.01.2019թ. -ից հետո

Լիզինգի գծով պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի դիմաց վարձատուին վճարվելիք պայմանագրային վճարների ներկայիս արժեքով, որպես զեղչային դրույքաչափ կիրառելով վարձակալության ներհատուկ դրույքաչափը, բացառությամբ այն դեպքերի, երբ (ինչպես սովորաբար լինում է), երբ դրույքաչափը հեշտ որոշելի չէ: Այդ դեպքում օգտագործվում է Ընկերության կողմից լիզինգի մեկնարկի դրությամբ լրացուցիչ վարկերի ներգրավման տոկոսադրույքը: Վարձակալության գծով փոփոխական վճարները ներառվում են վարձակալության գծով պարտավորության չափման մեջ միայն այն դեպքում, երբ նրանք կախված են ինդեքսից կամ դրույքաչափից: Նման դեպքերում վարձակալության պարտավորության սկզբնական չափումը ենթադրում է, որ փոփոխական տարրը կմնա անփոփոխ ամբողջ վարձակալության ժամկետում: Լիզինգի այլ փոփոխական վարձավճարները ծախսվում են այն ժամանակահատվածում, որին նրանք վերաբերում են:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է վարձակալության պարտավորության չափով՝ հանած ստացված զեղչով, և գումարած.

- վարձակալության մեկնարակի դրությամբ կամ դրանցի առաջ վճարված գումարները,
- սկզբնական ուղղակի ծախսումները, և
- ճանաչված վերակազմման պահուստի գումարը, եթե Կազմակերպությունը ունի պայմանագրային պարտավորություն վերականգնելու վերաձակալված ակտիվը.

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալության գծով պարտավորությունը ավելացվում է տոկոսային ծախսի գումարով և նվազեցվում կատարված վճարների գումարով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացվում է ուղղիղ-գծային մեթոդով՝ վարձակալության մնացորդային ժամկետի և ակտիվի օգտագործման մնացորդային ժամկետի նվազագույն ժամկետում:

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու՝ Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գուղվիլի սկզբնական ճանաչումից,
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ոչ էլ հաշվապահական շահույթի վրա,
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կատացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

18. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

2020 թվականի հունվարի 30-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը («ԱՀԿ») հայտարարեց առողջապահական գլոբալ արտակարգ իրավիճակ Չինաստանի Վուհան քաղաքում ծագած կորոնավիրուսի նոր շտամի պատճառով («COVID-19 բռնկում»), ինչպես նաև նշեց միջազգային հանրության համար առկա ռիսկի մասին, քանի որ վիրուսը տարածվում է ողջ աշխարհում իր ծագման վայրից դուրս: 2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես պանդեմիա՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա:

COVID-19-ի բռնկման ամբողջ ազդեցությունը շարունակում է զարգանալ սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ: Որպես այդպիսին, անորոշ է, թե ինչ մասշտաբի ազդեցություն կունենա պանդեմիան Ընկերության ֆինանսական վիճակի, իրացվելիության և գործունեության հետագա արդյունքների վրա: Ղեկավարությունն ակտիվորեն հետևում է համաշխարհային իրավիճակի ազդեցությանն իր ֆինանսական վիճակի, իրացվելիության, գործառնությունների, հաճախորդների, գործունեության ոլորտի և աշխատուժի վրա: Հաշվի առնելով COVID-19 բռնկման ամենօրյա զարգացումները և դրա տարածման սահմանափակմանն ուղղված համաշխարհային գործողությունները՝ Ընկերությունն ի վիճակի չէ գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցությունն իր գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի կամ իրացվելիության վրա 2020 ֆինանսական տարվա համար:

Քանի որ Ընկերությունն ընդունել է ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ ստանդարտը, որի համաձայն ակնկալվող կորուստները ճանաչվում են՝ հիմնվելով պատմական փորձի, ներկայիս պայմանների և ողջամիտ ու հիմնավորված կանխատեսումների վրա, ապա COVID-19-ի հետևանքով կարող է անհրաժեշտություն առաջանալ այդ գնահատականներում, մասնավորապես՝ ակնկալվող կորուստների կանխատեսումներում ճշգրտումներ մտցնելու:

Արտակարգ իրավիճակների ժամանակ Ընկերությունը փակված չէր և աշխատում էր սովորական ծավալներով:

Չնայած Ընկերությունն այս պահին չի կարող գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցության տևողությունը կամ ծանրությունը, եթե պանդեմիան շարունակվի, ապա դա կարող է էական ազդեցություն թողնել Ընկերության 2020 ֆինանսական տարվա հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

«ԱԳՐՈՒԻԶԻՆԳ» ԼՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է Մակարդակ 2-ում դասակարգվող իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական դիտարկելի ելակետային տվյալները:

	Իրական արժեք, հազար դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Հաճախորդներին տրված վարկեր	843,725	Վարկերի իրական արժեքը չափվում է՝ ապագա պայմանագրային դրամական միջոցների հոսքերը գեղջելով ներկա շուկայական տոկոսադրույքներով: Փոխառությունների և վարկերի իրական արժեքը չափվում է՝ ապագա պայմանագրային դրամական միջոցների հոսքերը գեղջելով ներկա շուկայական տոկոսադրույքներով:	Մակարդակ 2	19-20% գեղջման դրույք
Ներգարված փոխառություններ և վարկեր	582,859	Վարձակալության գծով պարտավորության անվանական արժեքները մոտարկում են իրական արժեքներին	Մակարդակ 2	6-9% գեղջման դրույք
Վարձակալության գծով պարտավորություն	21,654		Մակարդակ 2	-